ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ – Ծ1153.Մ11002/21
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» «փետրվար» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Վ. Կարապետյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1153 «Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր» ծրագրի 11002 «Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 24,055,600 (քսանչորս միլիոն հիսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի կարողությունների զարգացման աշխատանքներն իրականացնել սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառում) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել հաշվապահական հաշվառման մասին << օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ << ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել << ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.6. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել 2021 թվականին սույն պայմանագրով իրականացվող եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 6 հավելվածի: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը:

2.4.7. 2021 թվականի հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին << օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով.

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը հաշվետու ամսվա ավարտից հետո Նախարարության պատասխանատու ստորաբաժանում է ներկայացնում Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երեքական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 հավելվածի:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է << ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը

տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը, իսկ որոշ ծախսային հոդվածների գծով դեկտեմբեր ամսվա արդյունքներով պայմանավորված խնայողությունների ետ վերադարձը իրականացնել մինչև հաջորդ տարվա հունվարի 20-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է 24,055,600 (քսանչորս միլիոն հիսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.1.1.Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

5.2.Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո Կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով՝ 2,002,000.0 (երկու միլիոն երկու հազար) ՀՀ դրամ, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով:

5.2.1. Պայմանագրի գինն իր մեջ ներառում է փոփոխուն և հաստատուն ծախսեր.

5.2.2. փոփոխուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 1,406.800 ՀՀ դրամ, այդ թվում՝

- Երևան քաղաքում կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով՝ 33,000 ՀՀ դրամ
- ՀՀ մարզերում մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով՝ 290.400 ՀՀ դրամ
- Երևան քաղաքում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվության ծառայությունների գծով՝ 67,000 ՀՀ դրամ
- ՀՀ մարզերում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվության ծառայությունների գծով՝ 1,016.400 ՀՀ դրամ:

5.2.3. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 22,648.800 ՀՀ դրամ:

5.3. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.4. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N4 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի, քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից

աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափին գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի NN 1. 2, 3, 4, 5, 6 հավելվածները բաղկացած են 13 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ք. Երևան, Կառավարության 3 շենք

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011016939
ՀՎՀՀ 01506515

Նախարարության
գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան ____________
(ստորագրություն)

Կ. Տ.

Կազմակերպություն՝

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Կ. Ուլնեցու 68
բանկի անվանումը
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003831
ՀՎՀՀ 00802759

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

Կ. Կարապետյան ____________
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 1
2021 թ. _____ ____ -ին
Կնքված N ԴՏՊ – Ծ1153.Մ11002/21
պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	**Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ**	Մասնագիտական կողմնորոշման, կարիերայի ուղղորդման և ներառման կարողությունների զարգացման մեթոդական ապահովումը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման ոլորտում շարունակական ուսուցման իրականացումը և սուպերվիզիան	1. «Հմտությունների շրջանակի» մշակում հիմնված և համադրված ՀՀ զբաղմունքների դասակարգչի և մասնագիտությունների ցանկի և կրթական չափորոշիչների, աշխատաշուկայի հետազոտությունների վրա: 2. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ իրականացնող մասնագետների վերապատրաստում 3. Մասնագիտական կողմնորոշման վերապատրաստում անցած մասնագետների Անհատական մեթոդական	**Ակնկալվող արդյունքներ.** 1. Մշակված «Հմտությունների շրջանակ»: 2. Վերապատրաստված թվով 140 մասնագետ (60-ը Երևան քաղաքում, 80-ը ՀՀ մարզերում): 3. Մեթոդական աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն (սուպերվիզիա) ստացած թվով 300 արդեն վերապատրաստված մասնագետ (որից՝ 100-ը Երևան քաղաքում, 200-ը ՀՀ մարզերում): **Գնահատման չափանիշներ.** 1. «Հմտությունների շրջանակը» մշակվել է սահմանված ժամկետում: 2. Վերապատրաստումները և սուպերվիզիայի ծառայությունները մատուցվել	31.12.2021թ.	Սույն պայմանագրով նախատեսված միջոցների շրջանակներում

					Եզրակացություն

Պլան-ժամանակացույց
«Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» միջոցառման

Հ/Հ	Գործընթացները	Կատարման ժամկետը 2021թ.
1.	Ծրագրով նախատեսված աշխատանքների համար ՀՀ ԱՍՀՆ գլխավոր քարտուղարի և Ազգային ինստիտուտի տնօրենի միջև կնքվող դրամաշնորհի տրամադրման պայմանագրի նախագծի նախապատրաստական աշխատանքների իրականացում	Հունվար
2.	«Հմտությունների շրջանակի» մշակում, որը լրացնում է զբաղմունքների դասակարգչի և մասնագիտական կրթական չափորոշիչների բովանդակությունը՝ աշխատաշուկայի շարունակական փոփոխվող պահանջարկին համապատասխան և համարվում դրանց անբաժանելի մաս	Հունվար-նոյեմբեր
2.1.	«Հմտությունների շրջանակի» մշակման մեթոդաբանության հստակեցում, միջազգային փորձի (մասնավորապես՝ ETF, ILO, ESCO, O'net և այլ) ուսումնասիրում	Հունվար-փետրվար
2.2.	2019-2020թթ. իրականացված աշխատաշուկայի տարբեր հետազոտությունների ուսումնասիրում, պահանջարկ ունեցող հիմնական համընդհանուր հմտությունների ցանկի առանձնացում	Փետրվար-մարտ
2.3.	Առանձնացված ցանկի քննարկում ընտրանքային, տարբեր ոլորտների գործատուների ներկայացուցիչների հետ, հմտությունների անվանումների և բովանդակության հստակեցում և համապատասխանեցում Հայաստանի աշխատաշուկային	Ապրիլ
2.4.	Հմտությունների հիմնական ցանկից բխող շրջանակի հստակեցում, յուրաքանչյուր հմտության հակիրճ նկարագրության մշակում	Մայիս-սեպտեմբեր
2.5.	«Հմտությունների շրջանակի» նախնական տարբերակի փորձագիտական (գիտական հաստատությունների, գործատուների պետական կառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ) և հանրային քննարկում	Հոկտեմբեր
2.6.	Փաստաթղթի լրամշակում, ՀՀ ԱՍՀՆ ներկայացում և հրապարակում	Նոյեմբեր

3.	Հանրակրթական և մասնագիտական կրթական հաստատությունների, համալիր սոցիալական ծառայությունների և զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների, մասնագիտական կողմնորոշում և կարիերայի խորհրդատվություն իրականացնող սոցիալական այլ ծառայությունների թվով 140 մասնագետի վերապատրաստում	Փետրվար-դեկտեմբեր
4.	Նախորդ տարիներին վերապատրաստված թվով 300 մասնագետի սուպերվիզիա (մեթոդական աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն)	Հունվար-դեկտեմբեր

Նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան

Կ.Տ.

Կազմակերպություն

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պարտականությունները կատարող՝

Վ. Կարապետյան

Կ.Տ.

Հավելված N2

« » « » 2021թ.

N ԴՏՊ- Ծ1153.Մ11002/21 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 1153 «Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման ծրագիր» ծրագրի 11002 «Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ» միջոցառման շրջանակներում ծառայությունների իրականացման նպատակով «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1. Շահառուների տարեկան թվաքանակը	**-440 շահառու**
2. Մշակվող մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման ուղեցույց-ձեռնարկների տարեկան թվաքանակը	**- 2 ձեռնարկ**
3. Երևան քաղաքում կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով	
3.1 Շահառուների տարեկան թվաքանակը	**- 60 շահառու**
3.2 Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության գինը	**- 550.0 դրամ**
3.3 Երևան քաղաքում կադրերի վերապատրաստման մատուցվելիք ծառայության նվազագույն տարեկան շահավետ գինը	**-33.0 հազ.դրամ**
4. ՀՀ մարզերում մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով	
4.1 Շահառուների տարեկան թվաքանակը	**- 80 շահառու**
4.2 Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության գինը	**- 3,630.0 դրամ**
4.3 ՀՀ մարզերում կադրերի վերապատրաստման մատուցվելիք ծառայության նվազագույն տարեկան շահավետ գինը	**- 290.4 հազ.դրամ**
5.Երևան քաղաքում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվության ծառայությունների գծով.	
5.1 Շահառուների տարեկան թվաքանակը	**- 100 շահառու**
5.2 Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության գինը	**- 670.0 դրամ**
5.3 Երևան քաղաքում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվության մատուցվելիք ծառայության նվազագույն տարեկան շահավետ գինը	**- 67.0 հազ. դրամ**
6. ՀՀ մարզերում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվության ծառայությունների գծով	
6.1 Շահառուների տարեկան թվաքանակը	**-200 շահառու**
6.2 Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության գինը	**- 5082.0 դրամ**
6.3 ՀՀ մարզերում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվության մատուցվելիք ծառայության նվազագույն շահավետ գինը	**- 1016.4 հազ. դրամ**
7. Մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման ուղեցույց-ձեռնարկների մշակման, կադրերի վերապատրաստման, վերապատրաստված մասնագետների մեթոդական աջակցության և մասնագիտական խորհրդատվության համար մատուցված ծառայությունների հաստատուն ծախսերի գծով տրամադրվող դրամաշնորհի նվազագույն տարեկան շահավետ գինը	**- 22,648.8 հազ.դրամ**
8. Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը	**- 24,055.6 հազ.դրամ**

այդ թվում՝

Երևան քաղաքում կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով

ա/ Մատուցվելիք ծառայության սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Դասակարգման սինթետիկ տարրերի անվանումը	Դասակարգման ենթաանալիտիկ տարրերի անվանումը	Ծածկագիրը	Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության միջին չափաքանակը (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Գրասենյակային նյութեր և հագուստ	Գրասենյակային պիտույքներ	426100	550.0	33.0
Ընդամենը			**550.0**	**33.0**

ՀՀ մարզերում կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով

ա/ Մատուցվելիք ծառայության սահմանային չափաքանակները՝ ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Դասակարգման սինթետիկ տարրերի անվանումը	Դասակարգման ենթաանալիտիկ տարրերի անվանումը	Ծածկագիրը	Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության միջին չափաքանակը (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)

Գրասենյակային նյութեր և հագուստ	Գրասենյակային պիտույքներ	426100	550.0	44.0
Գործուղումների և շրջագայության ծախսեր	Ներքին գործուղումներ	422100	3080.0	246.4
Ընդամենը			**3,630.0**	**290.4**

Երևան քաղաքում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցության և խորհրդատվության ծառայությունների գծով.

ա/ Մատուցվելիք ծառայության սահմանային չափաքանակները՝ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Դասակարգման սինթետիկ տարրերի անվանումը	Դասակարգման ենթաանալիտիկ տարրերի անվանումը	Ծածկագիրը	Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության միջին չափաքանակը (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Գրասենյակային նյութեր և հագուստ	Գրասենյակային պիտույքներ	426100	670.0	67.0
Ընդամենը			**670.0**	**67.0**

ՀՀ մարզերում և ԱՀ-ում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցության և խորհրդատվության ծառայությունների գծով.

ա/ Մատուցվելիք ծառայության սահմանային չափաքանակները՝ըստ ծախսերի տնտեսագիտական տարրերի.

Դասակարգման սինթետիկ տարրերի անվանումը	Դասակարգման ենթաանալիտիկ տարրերի անվանումը	Ծածկագիրը	Մեկ շահառուին մատուցվելիք ծառայության միջին չափաքանակը (դրամ)	Տարեկան չափաքանակը (հազ. դրամ)
Գրասենյակային նյութեր և հագուստ	Գրասենյակային պիտույքներ	426100	670.0	134.0
Գործուղումների և շրջագայության ծախսեր	Ներքին գործուղումներ	422100	4412.0	882.4
Ընդամենը			**5082.0**	**1016.4**

Հաստատուն ծախսերի գծով

ա/ հաստատուն ծախսերի սահմանային չափաքանակները ՝ ըստ ծախսերի տնտեսագիտական ծածկագրի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	15060.6
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	5948.7
Այլ ծախսեր	480000	3046.3
Ընդամենը		24055.6

Փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով

ա/ կատարվելիք փոփոխուն և հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի տրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը (հազ. դրամ)	Ամիսները	Ընդամենը (հազ. դրամ)
հունվար	2015.3	հուլիս	14043.1
փետրվար	4030.6	օգոստոս	16045.9
մարտ	6032.6	սեպտեմբեր	18047.9
ապրիլ	8035.4	հոկտեմբեր	20050.7
մայիս	10038.3	նոյեմբեր	22053.6
հունիս	12040.3	դեկտեմբեր	24055.6
Ընդամենը	24,055.6		

Նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար

Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն

Տնօրենի ժամանակավոր պարտականությունները կատարող՝

Վ. Գրիգորյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
[illegible]
[illegible] 2020 թվականի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2020 թվականի ամռանը տրված 153 «Մոլորակային պաշտպանության ոլորտում գործունեության մասին» – [illegible] դեկտեմբերի 11002 «Մասնավոր սեկտորի համանարթի մեխանիզմների ապահովման և կայուն մատակարարման [illegible] ինքնաբերաբարձակման տեղամասերում ընդհանուր [illegible] տարածքների [illegible] տարածքի [illegible] ինքնաբերաբարձակման [illegible] ինքնաբերաբարձակման [illegible] ինքնաբերաբարձակման

Գազի և ածխաջրածնային վառելիքի ծախսեր		421600	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գազի ծախսեր	421610									
	Ածխաջրածնային վառելիքի ծախսեր	421620									
Ներքին տրանսպորտային ծախսեր		421700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ներքին տրանսպորտային ծառայություններ	421710									
	Ներքին տրանսպորտային կապակցված գործարքներ	421720									
	Ներքին տրանսպորտային տրանսպորտային ծախսեր (գնում և այլն)	421730									
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910									
Մասնագիտական ծառայություններ		424100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Խորհրդատվական ծառայություններ	424110									
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110									
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		425200	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425220									
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425290									
Գրասենյակային նյութեր և նվերներ		426100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային պիտույքներ	426110									
	Հաստոցի և գծագրերի	426120									
Տրանսպորտային նյութեր		426400	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Վառելիքի ծախսեր	426410									
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490									
Սննդամթերքի և խմորեղեն նյութեր		426500	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մթերային ընկերությունների նյութեր	426510									
Կենցաղային և հանրային սեղմի նյութեր		426700	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Կենցաղային նյութեր (Մաքրող և լվացող նյութեր)	426710									
	Հանրային սեղմի նյութեր (Մթերք)	426720									
	Կենցաղային այլ նյութեր (Մեխանիկական նյութեր սարքերում)	426730									
Պարապիր մասեր		482300	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ պարապիր մասեր	482350									
Այլ ծախսեր		486100	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Այլ ծախսեր	486110									

Տեղեկ

Պետական հաշվապահ _____ (ստորագրություն)

(անուն, ազգանուն)

Հաստատված է

Հաստատված է՝

Նախարարություն՝

Նախարարության գլխավոր ֆինանսական տնօրեն՝

_____ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կազմակերպություն՝

Տնօրենի տարեկան գործունեությունը կազմակերպող՝

_____ Վ. Կարապետյան

(ստորագրություն)

Հավելված N 4
2021թ. կնքված
N ԴՏՊ - Ծ1153.Մ1002/21 պայմանագրի

Նախարարություն՝

Հայցեն՝

Ստ/հ
Հվհհ

Կազմակերպություն՝

Հաստատեմ՝

Ստ/հ
Հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« » » 2021 թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝

Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար , և Կազմակերպությունը, ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « » » 2021թ. N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « » » 2021 թ.-ից « » » 2021 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով (դրամ)	Մեկ միավորի գինը (դրամ)	Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)	Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)	Վճարման վերջնաժամկետը ըստ ամիս, ամսաթիվը
1	2	3	4	5=3-4	6=2x5	7
Գործնական ծախսեր	x	x	x	x		x
Երևան քաղաքում կայքերի վերակազմակերպման ծառայությունների մատուցում						
ՀՀ մարզերում մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով						
Երևան քաղաքում վերապատրաստված մասնակցների մասնագիտական ու մեթոդական աջակցության և խորհրդատվության (սուպերվիժիա) ծառայությունների մատուցում						
ՀՀ մարզերում վերապատրաստված մասնակցների մասնագիտական ու մեթոդական աջակցության և խորհրդատվության (սուպերվիժիա) ծառայությունների մատուցում						
Հաստատուն ծախս						
Ընդամենը	x	x	x	x		x

ընդունեց՝

Ստորագրություն Ազգանուն

Կ.Տ.

հանձնեց՝

Ստորագրություն Ազգանուն

Կ.Տ.

Հավելված N 5
2021թ. « » կնքված
N ԴՏՊ - Ծ1153.Մ11002/21 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

0. 0. 2021թ.
Պայմանագրի անվանումը՝ Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «00» « 00» 201թ.
Պայմանագրի համարը՝ ԴՏՊ - Ծ1153. Մ11002/21
Նախարարության անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կազմակերպության անվանումը՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը «00» «00» 2021 թ.-ից «00» «00» 2021 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները.

N	Մատուցված ծառայությունների					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը*	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1.	Երևան քաղաքում կադրերի վերապատրաստման ծառայությունների մատուցում		-	-		
2.	ՀՀ մարզերում մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման մատուցվող ծառայությունների գծով		-	-		
3.	Երևան քաղաքում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցության և խորհրդատվության (սուպերվիզիա) ծառայությունների մատուցում		-	-		
4.	ՀՀ մարզերում վերապատրաստված մասնագետների մասնագիտական ու մեթոդական աջակցության և խորհրդատվության (սուպերվիզիա) ծառայությունների մատուցում		-	-		
5.	Ձեռնարկի մշակում		-	-		

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ ԴՐԱԿԱՆ եզրակացություն
(Դրական/բացասական)

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ անուն, ազգանուն

ստորագրություն

*Ծանոթություն. վերոնշյալ աշխատանքը կատարվի 2021 թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

_____ Ս. Մուրադյան
անվանագրերը

N 6 Հավելված
2021 թ. « » « » կնքված
N ՊՏՊ – Ծ1153.Մ1100221
պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Պետական ոչ առևտրային կազմակերպության 2020 թվականի ֆինանսատնտեսական գործունեության

1. Կազմակերպության անվանումը՝ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ

5. ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2. ՀԿՀՀ՝ 00802759

3. Փոստային հասցեն՝ ք. Երևան Կ. Ուլնեցու 68

4. Կազմակերպության տեղաբաշխման մարզ, կրոն ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման

01	012	1

6. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման ծածկագիր/բաժին, խումբ

10	05

7. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողերի NN	Ֆինանսատնտեսական գործունեության դրամական միջոցների գոյացման աղբյուրների և դրանց հաշվին իրականացվող ելքերի (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)		Առաջին եռամսյակ			Առաջին կիսամյակ			Ինն ամիս			Տարեվերջ		
	Անվանումները	Տնտեսագիտական ծածկագիրը	Նախահաշիվ	Ամսական տարեսկզբից (ավելացումներ՝ նվազեցումներ) նախահաշիվ	Հաստատված (ճշտված) նախահաշիվ	Նախահաշիվ	Ամսական տարեսկզբից (ավելացումներ՝ նվազեցումներ) նախահաշիվ	Հաստատված (ճշտված) նախահաշիվ	Նախահաշիվ	Ամսական տարեսկզբից (ավելացումներ՝ նվազեցումներ) նախահաշիվ	Հաստատված (ճշտված) նախահաշիվ	Նախահաշիվ	Ամսական տարեսկզբից (ավելացումներ՝ նվազեցումներ) նախահաշիվ	Հաստատված (ճշտված) նախահաշիվ
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2000000	I. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2112000+տող 2113000)	X												

2112000	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	X													
2112300	*2.3. Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված*	x													
2112310	2.3.1. ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝	733100													
2112311	2.3.1.1. պետական բյուջեից, այդ թվում՝	x													
2112312	2.3.1.1.1. պետության կողմից պատվիրակված ծախսերի	x													
1000000	II. ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+ տող 4000000)	X													
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող 1110000+ տող 1120000 + տող 1140000+տող 1150000+տող 1160000+տող 1170000) այդ թվում՝	X													
1110000	1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 1111000+ տող 1112000+տող 1113000 +տող 1115000+տող 1116000)	X													
1111000	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100													
1120000	2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 1121000+ տող 1122000 + տող 1123000+ տող 1124000+ տող 1125000+ տող 1126000) այդ թվում՝	X													
1121000	*2.1. Շարունակական ծախսեր*	x													
1121200	- Էներգետիկ ծառայություններ	421200													
1121300	- Կոմունալ ծառայություններ	421300													
1121400	- Կապի ծառայություններ	421400													
1121500	- Ապահովագրական ծախսեր	421500													
1121600	- Գույքի և սարքավորումների վարձակալություն	421600													
1122000	*2.2. Ծառայողական գործուղումների գծով ծախսեր*	x													

1122100	Ներքին գործուղումներ	422100													
1125000	***2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և***	x													
1125100	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425100													
1125200	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425200													
1126000	***2.6. Նյութեր (ապրանքներ)***	x													
1126100	- Գրասենյակային նյութեր և հագուստ	426100													
1126700	- Կենցաղային և հատուկ սննդի նյութեր	426700													
1170000	7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x													
1172200	- Այլ հարկեր	482200													
1172300	- Պարտադիր վճարներ	482300													
3000000	III. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՖԻՑԻՏ	x													

«__» _____ 2020 թ.

Կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող՝ _____ Վ. Կարապետյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ Վ. Պայլան
(ստորագրություն)